ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդը, ինչպես և մեր հայրենիքի բոլոր ժողովուրդներն ու աշխարհի առաջադեմ մարդկությունը, հանդիսավորությամբ նշեցին Հայաստանի մեծագույն զավակներից մեկի՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը։

Սեպտեմբերի 24-ին Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի ու բալետի թատրոնի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց հանրապետական կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը։

— Հայ ժողովրդի կուլտուրայի պատմությունը,—ասաց Ա. Քոչինյանը,—հարուստ է մեծ ու նշանավոր դեմքերով, որոնք արժանի են հիշվելու խորին երախտագիտությամբ։ Բայց ժողովուրդը, իբրև ազգային և միջազգային տոն, նշանավորում է ամենամեծերի հիշատակը։ Նրանց, որ բոլորից բարձր են իրենց արվեստով ու գաղափարախոսությամբ։ Նրանց, որ բոլորից խորունկ ու կատարյալ են արտահայտել ժողովրդի կյանքը, բնավորությունը, իղձերը, ովքեր ամենից լավ են հնչեցրել ոչ միայն ազգային, այլև համամարդկային գաղափարներ։ Եվ, վերջապես, նրանց, ովքեր հեռվից ձեռք են մեկնում գալիք սերունդներին, սովորեցնում նրանց ապրել ու մաքառել հանուն մարդկության լավագույն իդեալների, հանուն խաղաղության և ժողովուրդների եղբայրության։

Հայ ժողովրդի համար այդպիսի մեծություն է Հովհաննես Թումանյանը։

Գլուխ խոնարհելով մեր մեծ հայրենակցի հիշատակի առաջ, մենք հպարտանում ենք նրա ոչ միայն գեղարվեստական ժառանգությամբ, այլև իդեալների մեծությամբ ու դեղեցկությամբ և այդ նույն իդեալների կենսագործումով, որի հնարավորությունը տվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Ելույթի վերջում Ա. Քոչինյանը ներկայացրեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությանը ժամանած՝ եղբայրական հանրապետությունների պատվիրակություններին, սոցիալիստական երկրների ու արտասահմանյան երկրների հյուրերին, սփյուռքահայ գրողներին ու հասարակական գործիչներին և շնորհակալություն հայտնեց նրանց։

Հոբելյանական նիստում զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Է. Թոփչյանը։ Բնութագրելով հայ ժողովրդի սոցիալական-քաղաքական կացությունը անցյալ դարի վերջերին և XX դարի սկզբին, Է. Թոփչյանը ասաց.

— Հովհաննես Թումանյանի հոգով անցան հայ ժողովրդի ծանր ճակատագրի տարուբերումները, ճնշված ազգության վեհությունն ու ողբերգությունը։ Թումանյանը հայ ժողովուրդն էր բանաստեղծության մեջ, ժողովուրդը՝ իր ճշմարիտ կերպարանքով, մտքերով ու երազներով։

Հանգամանորեն խոսելով Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մասին, զեկուցողը առանձնապես ընդգծում է նրա հայրենասիրական ու մարդասիրական ոգին, ժողովուրդների եղբայրության ու բարեկամության, խաղաղասիրության ոգին, բանաստեղծի հասարակական-քաղաքական իդեալների վեհությունն ու մեծությունը։

Հոբելյանական նիստում ելույթ ունեցան ու ողջույնի խոսք ասացին եղբայրական հանրապետությունների պատվիրակությունների ղեկավարները, սոցիալիստական ու արտասահմանյան երկրներից ժամանած հյուրերը, որոնց թվում՝ ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ս. Սարտակովը, *Թումանյանի հոբելյանի անցկացման համամիութենական կոմիտեի նախագահ, գրող* Ա. Սուրկովը, *Ռուսաստանյան Ֆեդերացիայի գրողների միության վարչության նախագահ* Լ. Սոբոլևը, *կուսակցության Մոսկվայի քաղկոմի բաժնի վարիչ* Յու. Վերշենկոն, *Լենինգրադի Զերժինսկու կուսշրջկոմի առաջին քարտուղար* Բ. Անդրեևը, *ուկրաինացի գրող* Օ. Գոնչարը, *Բելոռուսիայի ժողովրդական բանաստեղծ* Մաքսիմ Տանկը, *Ուզբեկստանի գրողների միու-*

թյան վարչության նախագահ Ք. Յաշենը, Ղազախստանի գրողների միության վարչության քարտուղար Ջ. Մուլդագալիևը, կուսակցության Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար Օ. Լոլաշվիլին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ջ. Ջաֆարովը, Կաունասի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Յա. Նարկևիչյուսը, Մոլդավական ՍՍՀ կուլտուրայի մինիստր Լ. Կուլյուկը, Լատվիայի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ա. Դորիսը, Կիրգիզիայի գրողների միության վարչության քարտուղար Ժ. Մավլյանուկը, Տաջիկստանի Գերագույն սովետի նախագահ Մ. Միրշաքարը, Թուրքմենական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Սեյտակովը, Էստոնական ՍՍՀ կուլտուրայի մինիստր Ա. Լաուսը, Բուլղարիայի ժողովրդական բանաստեղծ Լ. Մադիևովը, Յան Մարիա Գիոգեսը (Լեհաստան), Կուբայի ժողովրդական բանաստեղծ, «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային Լենինյան մրցանակի դափնեկիր Ն. Գիլիենը, բանասիրական գիտությունների դոկտոր Լաբիֆ էլ Զայաթը (ԱՄՀ), Իրանի ժողովրդական կրթության մինիստրի խորհրդական, դոկտոր Զոհրաբ Դուսդարը, արաբ գրող ու թարգմանիչ Նիզար Խալիլին (Սիրիա)։

Նիստում հրապարակվեց խաղաղության համաշխարհային խորհրդի ողջույնի ուղերձը Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի մասնակիցներին։

Հովհաննես Թումանյանին հարգանքի ու սիրո տուրք մատուցեց մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան։

Հոկտեմբերի 3-ին ՍՍՀ Միության Մեծ թատրոնում կայացավ բանաստեղծի 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ, որը հրավիրել էր համամիութենական հոբելյանական կոմիտեն։

Նախագահությունում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Հ. Մուրադյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը, ՍՍՀՄ կուլտուրայի մինիստր Ե. Ա. Ֆուրցևան, ՍՄԿԿ Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Վ. Ֆ. Շաուրոն, կուսակցության Մոսկվայի քաղաքային կոմիտեի քարտուղար Ա. Պ. Շապոշնիկովան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Գ. Ա. Արզումանյանը, Մ. Ս. Մելքոնյանը, Ռ. Հ. Խաչատրյանը, Լենինյան մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Ա. Ի. Խաչատրյանը, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստր Կ. Բ. Ուզումյանը, համամիութենական հոբելյանական կոմիտեի անդամները, ՍՍՀՄ, ՌՍՖՍՀ, Հայկական ՍՍՀ գրողների միությունների վարչությունների, Մոսկվայի գրողների կազմակերպության քարտուղարներ, երկրի նշանավոր գրողներ։

Հանդիսավոր նիստին ներկա էին ընկերներ Լ. Ի. Բրեժնևը, Ա. Պ. Կիրիլենկոն, Կ. Տ. Մազուրովը, Ն. Վ. Պոդգորնին, Դ. Ս. Պոլյանսկին, Ա. Ն. Շելեպինը, Վ. Վ. Գրիշինը, Պ. Ն. Դեմիչևը, Ի. Վ. Կապիտոնովը, Ֆ. Դ. Կուլակովը, Բ. Ն. Պոնոմարյովը։

Նիստը բացեց համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահ, բանաստեղծ Ալեքսեյ Սուրկովը։

— Թումանյանի հոբելյանը,— ասաց նա,— մեր հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդների տոնն է։ Թումանյանը մեզ բոլորիս համար թանկ է այն պատճառով, որ բանաստեղծի հուզումնալի վառ խոսքը երբեք չի տարբերվել քաղաքացու, իր ժողովրդի հավատարիմ զավակի քաջարի գործերից։

Հովհաննես Թումանյանի մասին զեկուցեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը։

— Թումանյանի ստեղծագործությունը և նրա ողջ կյանքը,— ասաց զեկուցողը,— ժողովրդին, մարդկության պայծառ իդեալներին, ժողովուրդների բարեկամության վսեմ գաղափարին ծառայելու փայլուն օրինակ է։ Նրա ստեղծագործության գլխավոր բովանդակությունը աշխատավորությանը, ճնշված մարդուն անվերապահորեն պաշտպանելն է բոլոր տիպի կեղեքողներից։ Հովհաննես Թումանյանը երազում էր տեսնել Հայաստանի բարգավաճումը։ Նա հասցրեց տեսնել միայն Հոկտեմբերի արշալույսը։

Դեռ նախքան հեղափոխությունը Թումանյանը գրել է, որ Իլյա Մուրոմեց դյուցազնի եղբայրների շարքում կկանգներ նաև Սասունցի Դավիթը, եթե դուրս գար Մսրա Մելիքի փորած հորից։ Եթե պարզ է, որ ի դեմս Իլյա Մուրոմեցի և Սասունցի Դավթի Թումանյանը խորհրդանշում էր ռուս և հայ ժողովուրդներին, ապա մենք կարող ենք ասել, որ նրա երազանքը իրականացել է։

Հոբելյանական նիստում ելույթներ ունեցան ռուս ավագագույն բանաստեղծ Ն. Տիխոնովը, «Լիտերատուրնայա Գրուզիա» հանդեսի խմբագիր Գ. Ցիցիշվիլին, ուկրաինացի գրող Լ. Պերվոսայսկին, Ուզբեկստանի արվեստի վաստակավոր գործիչ, բանաստեղծ Ֆ. Դուլյամը։

* * *

Սեպտեմբերի 11-ին և 12-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան, որ կազմակերպել էր Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը։

Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, բացելով նստաշրջանը, ասաց.

— Մեր ազգային մեծագույն բանաստեղծ և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի նշանավոր տոներից մեկն է, որը մեր մեծ հայրենիքի եղբայրական ազգերի և ամբողջ աշխարհի բարի կամքի տեր մարդկանց հետ միասին նշում է հայ ժողովուրդը։ Թումանյանը անփոխարինելի տեղ է գրավում հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ, մեր ժողովրդի ողջ հոգևոր կյանքում։ Թումանյանը իր հետ բերեց հայ բանաստեղծական խոսքի, գրականության ժողովրդայնության ու ռեալիզմի նոր չափանիշներ։ Նա մեր արվեստը ավելի մոտեցրեց կյանքին, ժողովրդին, գեղարվեստորեն մարմնավորելով իր ժողովրդի հոգևոր աշխարհի, նրա բնավորության ամենաբնորոշ, լավագույն գծերը, սոցիալական և ազգային արդարության երազանքը, մարդասիրական մեծ խոհերը, քաղաքակիրթ ազգերի եղբայրության մեջ ապրելու կամքը։

Այնուհետև «Թումանյանը և արդիականությունը» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Աղաբաբյանը։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանի զեկուցումը նվիրված էր «Ժողովրդի բանաստեղծը և ժողովրդական բանարվեստը» թեմային։ Շոթա Ռուսթավելու անվան վրացական գրականության ինստիտուտի գրական կապերի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Դ. Ցիցիշվիլին զեկուցում կարդաց «Թումանյանի հասարակական-գրական կապերը Վրաստանի հետ» թեմայով։ «Թումանյանի ստեղծագործությունների վրացերեն թարգմանությունները» թեմայով զեկուցեց նույն ինստիտուտի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Արվելաձեն։ Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ Նիզամու անվան լեզվի և գրականության ինստիտուտի ավագ դիտաշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Թ. Ախմեդովը զեկուցման նյութն էր «Թումանյանը ադրբեջաներեն»։ «Մարդը և աշխարհը Թումանյանի երկերում» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Սարգսյանը, իսկ բանաստեղծ Պ. Սևակը զեկուցում կարդաց «Թումանյանի մեծությունը» թեմայով։ «Թումանյանի դրամատուրգիական փորձերը» խորագիրն էր կրում բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյանի զեկուցումը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանի զեկուցումը նվիրված էր «Թումանյանը և հայ հին գրականությունը» թեմային։ «Թումանյանի ռեալիզմը» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Ջրբաշյանը։ Նստաշրջանում լսվեցին նաև Լ. Կարապետյանի «Հովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում» և Կ. Դանիելյանի «Թումանյանի արձակի գեղարվեստական մի քանի առանձնահատկությունների մասին» զեկուցումները։

Սեպտեմբերի 30-ին գիտական նստաշրջան տեղի ունեցավ Մոսկվայի Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում։ Նստաշրջանը հրավիրել էին Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը և Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը։

Նստաշրջանը բացեց Գորկու անվան ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Սուչկովը։ Խոսելով Թումանյանի ստեղծագործության անգնահատելի նշանակության մասին, նա ասաց.

— Լինելով իր ժողովրդի պատմության ու կյանքի հիանալի գիտակը, Թումանյանը իր ստեղծագործությամբ դարձավ սովետական բոլոր ժողովուրդների սեփականությունը։ Ինտերնացիոնալիզմի ոգով տոգորված նրա ստեղծագործությունները խորապես փիլիսոփայական են և այսօր նույնպես թարմ ու վառ են հնչում։

Խոսելով Հովհաննես Թումանյանի և Հայաստան կատարած իր այցելությունների մասին, Ն. Տիխոնովը ասաց.

— Թումանյանի հայրենիքը անջնջելի տպավորություն թողեց ինձ վրա։ Ես տեսա խստաշունչ ու գեղեցիկ բնություն, աքանչելի աշխատասեր ժողովուրդ, որը արդեն 1924 թվականին, առաջին անգամ Հայաստան այցելելուս ժամանակ, սկսել էր վերափոխել իր հայրենի աշխարհը։ Ես ճանաչեցի մի երկիր, որը մարդկությանը տվել է մեծ հումանիստ բանաստեղծ։ Ես տեսա այն ժողովրդին, որի պատմությունն ու տառապանքները այնքան ներշնչվածությամբ ու խոր են պատկերված Թումանյանի ստեղծագործության մեջ։ Ես տեսա մարդկանց, որոնց երջանկությունը կանխատեսել էր բանաստեղծը։

Այնուհետև նստաշրջանում լսվեցին Է. Ջրբաշյանի «Թումանյանի ռեալիզմը», Ս. Աղաբաբյանի «Թումանյանը և արդիականությունը», Խ. Սարգսյանի «Աշխարհն ու մարդը Թումանյանի ստեղծագործության մեջ», Ա. Դիմշիցի «Բանա-

ստեղծի արձակը», Լ. Հախվերդյանի «Թումանյանը ձևի բովանդակալիության մասին», Ս. Շերվինսկու «Բանաստեղծի ստեղծագործության ինտերնացիոնալ երակի մասին», Ա. Ինճիկյանի «Թումանյանը և Շեքսպիրը», Գ. Ցիցիշվիլու «Թումանյանի կապերը վրաց կուլտուրայի ու գրականության հետ», Մ. Աբարեկյանի «Թումանյանի գեղագիտությունը», Լ. Մկրտչյանի «Թումանյանի թարգմանության պրոբլեմները», Ի. Սաֆրազբեկյանի «Թումանյանը և Գորկին» զեկուցումները։

* * *

Սեպտեմբերի 20-ին Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ ՍՍՀՄ գրողների միության և Հայաստանի գրողների միության վարչությունների միացյալ պլենումը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։

Պլենումը ներածական խոսքով բացեց ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ս. Բարուզդինը։

— Ամեն մի գրականության մեջ,—ասաց նա,— կան խորհրդանիշ-անուններ։ Հայ գրականության մեջ այդպիսի խորհրդանիշ-անուն է Հովհաննես Թումանյանը։ Հայ գրականության մեջ նրա նշանակությունը այնքան մեծ է, որքան Պուշկինի անունը ռուս գրականության մեջ։ Այսօր մեր երկրում Թումանյանին կարդում են Սովետական Միության ժողովուրդների տասնյակ լեզուներով։ Եվ ովքեր կարդում են նրան, խորհում են պոեզիայի վսեմ դերի մասին, մտածում այն մասին, որ իր տաղանդը ընթերցողներին ընծայած մարդը դարձել է երկու դարաշրջանները, երկու գրականությունները՝ դասականն ու մեր արդի, սովետականը, միացնող օղակ։ Գորկու, Մայակովսկու, Բրյուսովի, Եսենինի, Ալեքսեյ Տոլստոյի նման Թումանյանը կանգնած էր երկու դարաշրջանների խաչմերուկում և անվերապահ ընդունեց այն ամենը, ինչ մեծ Հոկտեմբերը բերեց մեր բազմազգ երկրին ու նրա ժողովուրդներին։

Պլենումի մասնակիցները ուշադրությամբ լսեցին ՍՍՀՄ գրողների միության Մոսկվայի կազմակերպության վարչության քարտուղար, բանաստեղծ Ս. Նարովչատովի «Մեծ բանաստեղծը և քաղաքացին» զեկուցումը։ Ս. Նարովչատովը վեր է հանում Թումանյանի մեծությունը, նրա ստեղծագործությունը համարելով հայերի քնարա-էպիկական հանրագիտարանը մեր ժամանակներում, այն համեմատելով Հոմերոսի «Իլիականի», Դանթեի «Աստվածային կատակերգության», Պուշկինի «Եվգենի Օնեգինի» հետ։ Խոսելով Թումանյանի ստեղծագործության ձևավորման գործում համաշխարհային գրականության ունեցած ղերի մասին, զեկուցողը հատկապես նշում է երեք հիմնական ազդեցություն՝ Հոմերոսի «Իլիականը», Արովյանի «Վերք Հայաստանին», Լերմոնտովի բանաստեղծությունները։ Տարբեր հորիզոններ, տարբեր երևույթներ, տարբեր աշխարհներ, և դրանք բոլորը միացել են երիտասարդ բանաստեղծի սրտում, դրանք բոլորն արտացոլվել են նրա որոնող և հարցախույզ աչքերում։

Բայց, որքան էլ լավ ու իմաստուն լիններին գրքերը, հայրենի բնությունը, Հայաստանի հայրենի հողը և ինքը՝ հայ ժողովուրդը դարձան Հովհաննես Թումանյանի իսկական ուսուցիչները։

Ողբերգական այն կացությունը, որի մեջ ապրում էր հայ ժողովուրդը, իր կնիքն է դրել Թումանյանի պոեզիայի վրա։ Սակայն, չնայած նրա շատ բանաստեղծությունների ու պոեմների թախիծին, ինքը՝ Թումանյանը, իր ստեղծագործությունը պայծառ է համարել։ Եվ մենք՝ նրա ընթերցողներն ու տաղանդի երկրպագուները, միանում ենք բանաստեղծի ինքնագնահատմանը։ Թումանյանի պոեզիայի լուսապայծառ աշխարհը նրա ժողովրդի աշխարհն է, նրա ազգային բնավորության էությունը, նրա հույսերի վերջնական հաղթանակը։

Հայաստանի գրողների միության քարտուղար Հ. Հովհաննիսյանը «Թումանյանը և մենք» զեկուցման մեջ վեր հանեց այն ազդեցությունը, որ ունեցել է Թումանյանի ստեղծագործությունը մեր ժամանակակիցների վրա, նպաստել նրանց հայրենասիրական, մարդասիրական, ինտերնացիոնալ զգացումների կազմավորմանը։

Այնուհետև ելույթներ ունեցան Վրաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Ռ. Աբաշիձեն, ադրբեջանական բանաստեղծ Օ. Սարիվելին, Ուկրաինայի գրողների միության վարչության քարտուղար Յու. Ջբանացկին, Մարիետա Շահինյանը, Լիտվայի գրողների միության վարչության քարտուղար, բանաստեղծ Է. Մեժելայտիսը, Մոլդավիայի գրողների միության քարտուղար Ա. Զեբոտարուն, հունգար բանաստեղծ Յանոշ Գերեն, դոկտոր-պրոֆեսոր Է. Ջրբաշյանը, Բելոռուսիայի գրողների միության քարտուղար Ի. Շամյակինը, ուզբեկական «Գուլիստան» հանդեսի գլխավոր խմբագիր Ա. Մուխթարովը, շվեդացի գրող Սվենեինգը, սիրիուքահայ գրող Վահե Վահյանը, սովետական նշանավոր բանաստեղծ Կ. Կուլիևը, գրող և թարգմանիչ Ց. Զազուրսկին (Հարավսլա-

վիա), «Երևան» թերթի խմբագիր Ռ. Թյուֆենքշյանը (Բուլղարիա), Ղազախստանի ժողովրդական բանաստեղծ Ս. Մուկանովը, Օ. Շեստինակին (Լենինգրադ), Հ. Գրիֆինը (Կանադա)։

Փակելով պլենումը, Ուկրաինայի գրողների միության վարչության առաջին քարտուղար, Լենինյան մրցանակի դափնեկիր Օ. Գոնչարը մասնակիցների և հյուրերի անունից հայ ժողովրդին, որն աշխարհին տվել է անմահ Հովհաննես Թումանյան, նոր մեծ հաջողություններ մաղթեց հանուն մեր սոցիալիստական հայրենիքի ծաղկման։

* * *

Հովհաննես Թումանյանի հոբելյանը մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշեց եղբայրական վրաց ժողովուրդը։

Սեպտեմբերի 26-ին Թբիլիսիի Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնում կայացավ հոբելյանական հանդիսավոր երեկո, որին մասնակցում էին Վրաստանի կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներ, Վրաստանի մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ, Հայաստանից, Մոսկվայից, Լենինգրադից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Ուկրաինայից, Թուրքմենիայից, Բելոռուսիայից և Սովետական Միության այլ վայրերից ժամանած կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներ, գրողներ, կուլտուրայի գործիչներ։

Բացելով հանդիսավոր նիստը, Թբիլիսիի քաղսովետի գործկոմի նախագահ Շ. Բուխրաշվիլին ասաց.

— Հայ ժողովրդի անմահ զավակի՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության ու եղբայրության տոնն է։ Մենք՝ վրացիներս, հրպարտանում ենք, որ Թումանյանը սպրել ու ստեղծագործել է Վրաստանում, որ նրա ստեղծագործությունը սերտորեն կապված է Վրաստանի ու նրա դրականության հետ։ Վրաստանում նա գտել է իր երկրորդ հայրենիքը, որտեղ և գրել է իր լավագույն բանաստեղծությունները, պատմվածքները, հեքիաթները, պոեմներն ու լեգենդները։

Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը,—վերջում ասաց Շ. Բուխրաշվիլին,— դարավոր ավանդույթներ ունի։ Այդ բարեկամության տարեգրության մեջ Հովհաննես Թումանյանը ամենափայլուն, ամենադեղեցիկ էջերն է գրել։ Այսօր սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում է՛լ ավելի պայծառ է շողշողում բանաստեղծի անմահ անունը։

Հանդիսավոր նիստում Թումանյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ Վրաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Գ. Աբաշիձեն։

Այնուհետև ելույթներ ունեցան Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, «Դրուժբա նարոդով» հանդեսի գլխավոր խմբագիր, համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահի տեղակալ Ս. Բարուզդինը։

Նույն օրը Թբիլիսիի 26 կոմիսարների անվան կուլտուրայի և հանգստի զբոսայգում, որտեղ գտնվում է Հովհաննես Թումանյանի գերեզմանը, կայացավ միտինգ, որին ներկա էին Վրաստանի կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներ, Թբիլիսիի հասարակայնության ներկայացուցիչներ, գիտնականներ, գրողներ, արվեստի ու կուլտուրայի գործիչներ։ Միտինգին մասնակցեցին Հայաստանի պատվիրակությունը, Մոսկվայի, Լենինգրադի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և այլ հանրապետությունների գրողներ, կուլտուրայի գործիչներ։

Թումանյանի գերեզմանին ծաղկեպսակներ դրվեցին Վրաստանի կոմկուսի Կենտկոմի, Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի, Գերագույն սովետի նախագահության, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի ու Գերագույն սովետի նախագահության, ՍՍՀՄ գրողների միության, Հայաստանի և Վրաստանի գրողների միությունների կողմից։

Ներածական խոսքով միտինգը բացեց Վրաստանի կոմկուսի Թբիլիսիի քաղաքային կոմիտեի քարտուղար Շ. Կարկարաշվիլին։

Ելույթներ ունեցան ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար, ակադեմիկոս, բանաստեղծ Ի. Աբաշիձեն, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ս. Բարուզդինը, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Մ. Շարիրյանը, Վրաստանի գրողների միության հայկական սեկցիայի նախագահ, ճարտարապետության դոկտոր Ռ. Աղաբաբյանը։

Հայ ժողովրդի մեծանուն զավակի հոբելյանի առթիվ Ադրբեջանում անցկացվեց Թումանյանական տասնօրյակ, որն ավարտվեց հանրապետության գիտությունների ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում սեպտեմբերի 30-ին կայացած հանդիսավոր երեկոյով։

Երեկոյին մասնակցում էին Ադրբեջանի կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներ, գիտության, գրականության ու արվեստի գործիչներ, Բաքվի հասարակայնության ներկայացուցիչներ, Հայաստանի գրողների պատվիրակությունը։

Բացելով երեկոն, Հ. Թումանյանի հոբելյանի տոնակատարության հանրապետական կոմիտեի նախագահ, Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Սուլեյման Ռուստամն ասաց.

— Հայ ժողովրդի անմահ բանաստեղծի հոբելյանը որպես իր մեծ տոն նշում է նաև ադրբեջանական ժողովուրդը՝ Անդրկովկասի երեք ժողովուրդներից մեկը, որոնց բարեկամությունը այնքան ոգեշունչ ուժով զովերգել է Թումանյանը։ Հովհաննես Թումանյանի՝ Հայաստանի մեծ բանաստեղծի, ազատության ու բարեկամության մունետիկի մասին ադրբեջանական ժողովուրդը հպարտությամբ ասում է՝ «նա և մեր բանաստեղծն է»։

Թումանյանի մասին Ադրբեջանի գրողների միության վարչության առաջին քարտուղար, հանրապետության ժողովրդական գրող Միրզա Իբրահիմովի զեկուցումը հրապարակեց բանաստեղծ Մամեդ Ռահիմը։

Այնուհետև ելույթներ ունեցան բանաստեղծներ Ս. Գրիգորյանը, Ա. Զիաբայը, Է. Բորչալին, Ա. Խալդեևը, Ի. Սեյիդովը, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Մ. Շաբիրյանը, Ա. Գրաշին, Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Մ. Ռահիմը։

Հոկտեմբերի 2-ին Թումանյանին նվիրված երեկույթ տեղի ունեցավ Մոսկվայի Պատրիս Լումումբայի անվան ժողովուրդների բարեկամության համալսարանի ակումբում։ Երեկույթը բացեց Ս. Բարուզդինը։ Ելույթ ունեցան Ս. Կապուտիկյանը, Ս. Շերվինսկին։ Համալսարանի պրոռեկտոր Կ. Ա. Ստաևը հրապարակեց համալսարանի ռեկտորատի և գիտական խորհրդի ողջույնի ուղերձը, որ հասցեագրված էր Երևանի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանին։

Թումանյանի հոբելյանը նշվեց նաև Լենինգրադում։ Հոկտեմբերի 5-ին քաղաքի գրողների տանը տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, որը բացեց ՌՍՖՍՀ գրողների միության Լենինգրադի բաժանմունքի վարչության առաջին քարտուղար Դ. Գրանինը։

Զեկուցումով հանդես եկավ Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Բ. Ռեիզյանցը։ Այնուհետև ելույթներ ունեցան «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսի խմբագիր, բանաստեղծ Ռ. Էմինը, Լենինգրադի բանաստեղծներ ու թարգմանիչներ Ս. Բոտվինինիկը, Վ. Ռոժդեստվենսկին, Ն. Շչերբակովը և ուրիշներ։

Թումանյանի հոբելյանը շուքով նշեց ուկրաինական ժողովուրդը։ Հոկտեմբերի 2-ին Կիևի ճարտարապետների տան դահլիճում կայացավ երեկո, որին ներկա էին գրականության և արվեստի գործիչներ, Ուկրաինայի մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ։

Իր ներածական խոսքում Ուկրաինայի գրողների միության նախագահ Օլես Գոնչարը, բարձր գնահատելով Թումանյանի ստեղծագործությունը, նրա հասարակական-քաղաքական գործունեությունը, նշեց այն խոշոր դերը, որ խաղացել է հայ բանաստեղծը ժողովուրդների միջև խաղաղության ու բարեկամության ամրապնդման, եղբայրական գրականությունների մերձեցման գործում։

Թումանյանի պոեզիայի մասին զեկուցումով հանդես եկավ բանաստեղծ, թարգմանիչ Վ. Կոշևսկին։ Ելույթ ունեցան արձակագիր Հ. Ղուկասյանը, բանաստեղծ Դ. Պավլիչենկոն և ուրիշներ։

Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ